

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

ԳՊԲ. *Խորհուրդ խորին անհաս անսկիզբն, որ զարդարեցեր զվերին պետութիւնդ, ի յառազատ անմատոյց լուսոյն, զերապանծ փառօք զդասըս հրեղինաց: **

Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա, եւ զերկրրպագուս անուանըդ քում պահեա ի խաղաղութեան:

ՔՀՆ. *Եւ վասն սրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեանն, Տէր, ընկալ զաղաչանս մեր եւ կեցո զմեզ:*

ՍՐԿ. *Սուրբ զԱստուածածինն եւ զամենայն սուրբըս բարեխօս արասցուք առ Հայր ի յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի եւ զըթացեալ կեցուցէ զարարածըս իւր, ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա:*

ՔՀՆ. *Ընկալ, Տէր, զաղաչանս մեր բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին անարատ ծնողի միածնի Որդւոյ քո եւ աղաչանօք ամենայն սրբոց քոց եւ աւուրս շնորհիւ: Լուր մեզ, Տէր, եւ ողորմեա, ներեա, քաւեա եւ թող զմեղս մեր: Արժանաւորեա զոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:*

Մեղուցեալ եմ Աստուծոյ: Խոստովանիմ առաջի Աստուծոյ եւ սրբուհւոյ Աստուածածնին եւ առաջի ամենայն սրբոց եւ առաջի ձեր՝ հարք եւ եղբարք, զամենայն մեղս զորս գործեալ եմ. քանզի մեղայ խորհրդով, բանիւ եւ գործով եւ ամենայն մեղօք զոր գործեն մարդիկ. մեղայ, մեղայ, աղաչեմ զձեզ, խնդրեցէք վասն իմ յԱստուծոյ զթողութիւն:

ՔՀՆ. **Ողորմեսցի քեզ Աստուած հօրն եւ թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց, անցելոյն եւ այժմուս, եւ յառաջակայն փրկեսցէ զքեզ, հաստատեսցէ զքեզ յամենայն գործս բարիս եւ հանգուցէ զքեզ ի հանդերձեալ կեանսն: Ամէն:*

ՔՀՆ. *Ազատեսցէ եւ զձեզ մարդասէրն Աստուած եւ թողցէ զամենայն յանցանս ձեր. տացէ ժամանակ ապաշխարելոյ եւ գործելոյ զբարիս, թ ուղղեսցէ եւ զառաջակայ կեանս ձեր շնորհօք Սուրբ Հոգւոյն, հօրն եւ ողորմածն, եւ նմա փառք յաւիտեանս: Ամէն:*

ԳՊԲ. *Յիշեսցիր եւ ըզմեզ առաջի անմահ Գառիինն Աստուծոյ:*

* Յորժամ պատարագողն եպիսկոպոս իցէ՝ դպիրքն երգեն.

ԳՊԲ. *Հրաշափառ Աստուած եւ միշտ բարեխնամող, որ յառաջ գիտութեամբ ըզփրկութիւն Հայաստանեայց ըկրզբնաւորեալ ի պարթեւական մեղապարտ ազգէն լուսաւորիչ մեզ շնորհեսցեր. վասն որոյ բարեխօսութեամբ սորա փրկիչ կեցո ըզմեզ այժմ եւ ի քո յահաւոր գալըստեանն:*

* Յորժամ այլ քահանայ ոչ գուցէ, սարկաւազն ասէ.

ՍՐԿ. *Արդ եկայք ամենեքեան խոնարհեալ անձամբք, բեկեալ սրտիւք, անկցուք եւ յացցուք առաջի Տեառն արարչին մերոյ, զի անցուցէ ի մէնջ զցատումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբն իւրով, ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա:*

ՔՀՆ. Յիշեալ լիջիք առաջի անմահ Որդւոյն Աստուծոյ:

Սաղմոս ԳԹ.(Ճ.)

ԳՊԲ. Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր, ծառայեցէք Տեառն ուրախութեամբ:
Մըտէք առաջի նորա ցընծութեամբ, ծաներուք զի նա է Տէր Աստուած մեր:
Նա արար ըզմեզ եւ ոչ մեք էաք, մեք ժողովուրդք եւ խաչն արօտի նորա:
Մտէք ընդ զրունս նորա խոստովանութեամբ եւ օրհնութեամբ ի յարկըս նորա:
Խոստովան եղերուք Տեառն եւ օրհնեցէք զանուն նորա:
Քաղցրը է Տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա. ազգէ մինչեւ յազգ է ճշմարտութիւն նորա:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանրս յաւիտենից: Ամէն:

ՍՐԿ. Սուրբ եկեղեցեալս աղաչեսցուք ըզՏէր, զի սովաւ փրկեցցէ ըզմեզ ի մեղաց եւ կեցուցցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա:

ՔՀՆ. Ի մէջ տաճարիս եւ առաջի աստուածընկալ եւ պայծառացեալ սուրբ նշանացս եւ սուրբ տեղոյս, խոնարհեալ երկիրդիւ երկիրպագանեմք: Զսուրբ եւ զհրաշալի եւ զյաղթող զյարութիւնդ քո օրհնեմք եւ փառաւորեմք եւ քեզ մատուցանեմք զօրհնութիւն եւ զփառս ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:
Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

Սաղմոս ԽԲ. (ԽԳ.)

ՍՐԿ. Դատ արա ինձ Աստուած եւ իրաւ արա ինձ ի դատաստանի իմում:

ՔՀՆ. Յազգէ որ ոչ է սուրբ, ի մարդոյ մեղաւորէ, նենգաւորէ փրկեա զիս:

ՍՐԿ. Դու, Աստուած, հըզօրիչ իմ ես, ընդէ՞ր մոռացար զիս, ընդէ՞ր տրտում գընամ ես ի նեղել թըշնամւոյ իմոյ:

ՔՀՆ. Առաքեա, Տէր, զլոյս քո եւ զճշմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն ինձ եւ հանցեն զիս ի լեառն սուրբ եւ ի յարկս քո:

ՍՐԿ. Մըտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած, որ ուրախ առնէ ըզմանկութիւն իմ:

ՔՀՆ. Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ, Աստուած, Աստուած իմ:

ՍՐԿ. Արդ, ընդէ՞ր տըրտում ես անձն իմ կամ ընդէ՞ր խըռովես զիս. յուսա առ Աստուած, խոստովանեա նրմա փրկիչ երեսաց իմոց Աստուած է:

ՔՀՆ. Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

ՍՐԿ. Այժմ եւ միշտ եւ յաւիտեանրս յաւիտենից: Ամէն:

Եւ եւրս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Օրհնեսցուք զամենակալն Աստուած՝ զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ արժանի արար զմեզ կալ ի տեղւոջս փառաբանութեան եւ երգել զերգս հոգեւորս: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա:

ՔՀՆ. Ի յարկի սրբութեան եւ ի տեղւոջս փառաբանութեան, հրեշտակաց բնակարանիս եւ մարդկան քաւարանիս. առաջի աստուածընկալ եւ պայծառացեալ սուրբ նշանացս եւ սուրբ սեղանոյս, խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմք: Զսուրբ եւ զհրաշալի եւ գյաղթող գյարութիւնդ քո օրհնեմք եւ փառաւորեմք եւ քեզ ընդ երկնային զօրսն մատուցանեմք զօրհնութիւն եւ զփառս ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՆՍՏԻՒ

Յորժամ պատարագողն եպիսկոպոս իցէ, դպիրքն երգեն.

Ընտրրեալդ յԱստուծոյ, ով երջանիկ սուրբ քահանայ. նրմանեալ Ահարոնի եւ Մովսէսի մարգարէին: Այնքմ որ ըզգեստուցն էր յօրինող, զոր Ահարոն միշտ ըզգենոյր: Յօրինէր ըզպատմուծանն, զոր ի չորից կազմեալ նիւթոց, ի կարմրոյ, ի կապուտոյ, ի բեհեզոյ, ի ծիրանւոյ:

ՄԵՂԵԴԻ
Յարութեան

Ի գերեզման յարուցելոյն անմահին, այսօր զոչէ հրեշտակն երկնային, յարեալ Քրիստոս, զարթեալ Քրիստոս, ի կոյս գերեզմանէն, ի լոյս գերեզմանէն: Պահպանքըն զարհուրեցան ի յահէն, քանզի ի նորափոր տապանէն յարեալ Քրիստոս, զարթեալ Քրիստոս, ի կոյս գերեզմանէն, ի լոյս գերեզմանէն:

ՈՏՔԻ ԿԱՆԳՆԻՒ

ՊԱՇՏՕՆ ՃԱՇՈՒ
ԹԱՓՕՐ
Շարական Խնկարկութեան

ԳՊՐ. Բարեխօսութեամբ մօր քո եւ Կոստի, ընկալ զաղաչանս քոց պաշտօնէից: Որ գերագոյն քան գերկինս պայծառացուցեր սուրբ գեկեղեցի արեամբ քով, Քրիստոս: Եւ ըստ երկնայնոցըն կարգեցեր ի սմա զդասս առաքելոց եւ մարգարէից սուրբ վարդապետաց:

Այսօր ժողովեալ դասք քահանայից, սարկաւագաց, դըպրաց եւ կղերիկոսաց: Խոնկ մատուցանեմք առաջի քո, Տէր, յօրինակ ըստ հնումն Զաքարիայ: Ընկալ առ ի մէնջ զխընկանուէր մաղթանս որպէս զպատարագն Աբելի, զՆոյի եւ զԱբրահամու: Բարեխօսութեամբ վերին քո զօրացդ, միշտ անշարժ պահեա զաթոռ Հայկազնեայս:

(Այլ շարականս տես յերես 38-48)

ՍՐԿ. Օրհնեա, տէր:

ՔՀՆ. Օրհնեալ թագաւորութիւնն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ
յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԺԱՄԱՍՈՒՏ
Կիւրակէից

ԳՊԲ. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն, որ յանձն առեր մարմնանալ, ի
սրբբուհոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն: Անփոփոխելի մարդ եղեալ, խաչեցար
Քրիստոս Աստուած մեր, մահուամբ ըզմահ կոխեցեր: Մինըդ ի Սրբոյ Երրորդութենէն,
փառաւորակից ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյն կեցո ըզմեզ:

(Այլ ժամամուտս տես յերես 40-41)

ՍՐԿ. Եւ եւրս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք, ընկալ, կեցո եւ ողորմեա: Օրհնեա, տէր:

ՔՀՆ. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից: Ամէն: ✠ Խաղաղութիւն ամենեցուն:

ԳՊԲ. Եւ ընդ հոգւոյդ քում:

ՍՐԿ. Աստուծոյ երկիրպագեսցուք:

ԳՊԲ. Առաջի քո, Տէր:

ՔՀՆ. Տէր Աստուած մեր, որոյ կարողութիւնդ անքնին է եւ փառքդ անհասանելի, որոյ
ողորմութիւնդ անչափ է եւ գթութիւնդ անբաւ. դու ըստ առատ մարդասիրութեանդ քում
նայեաց ի ժողովուրդս քո եւ ի տաճարս այս սուրբ: Եւ արա ընդ մեզ եւ ընդ աղօթակիցս մեր
առատապէս գողորմութիւն քո եւ գգթութիւն: Զի քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ
պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ ՃԱՇՈՒ
Սուրբ Յարութեան Առ.

Գովեա Երուսաղէմ ըզՏէր:

Յարեալ Քրիստոս ի մեռելոց. ալէլուիա:

Եկայք ժողովուրդք, երգեցէք Տեառն. ալէլուիա:

Յարուցելոյն ի մեռելոց. ալէլուիա, որ գաշխարհըս լուսաւորեաց. ալէլուիա:

(Այլ շարականս ճաշու տես յերես 42-45)

ՔՀՆ. Զի քո է կարողութիւն եւ գորութիւն եւ փառք յաւիտեանս: Ամէն:

ՍՐԿ. **Պռօսխոսումէ:**

ԳՊՐ. **Սուրբ Աստուած, սուրբ եւ հօր, սուրբ եւ անմահ, որ յարեար ի մեռելոց, ողորմեա մեզ:** (Երիցս կրկնեա)

Աւետեաց եւ Ծննդեան
Որ յայտնեցար վասըն մեր, ողորմեա մեզ:

Ծաղկապարոյի
Որ եկիր եւ գալոց ես, ողորմեա մեզ:

Համբարձման
Որ համբարձար փառօք առ Հայր, ողորմեա մեզ:

Հոգեգալստեան
Որ եկիր եւ հանգեար յառաքեալսն, ողորմեա մեզ:

ՎարդաՎառի
Որ յայտնեցար ի Թաբոր լերինն, ողորմեա մեզ:

Վերափոխման Աստուածածնի
Որ եկիր ի փոխումն մօր քո եւ Կուսի, ողորմեա մեզ:

Խաչի, Եկեղեցոյ, Սրբոց
Որ խաչեցար վասըն մեր, ողորմեա մեզ:

ՍՐԿ. **Եւ եւրս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:**

ԳՊՐ. **Տէր ողորմեա:**

ՍՐԿ. **Վասըն խաղաղութեան ամենայն աշխարհի եւ հաստատութեան սրբոց եկեղեցոյ, ըզՏէր աղաչեսցուք:**

ԳՊՐ. **Տէր ողորմեա:**

ՍՐԿ. **Վասն ամենայն սուրբ եւ ուղղափառ եպիսկոպոսաց, ըզՏէր աղաչեսցուք:**

ԳՊՐ. **Տէր ողորմեա:**

ՍՐԿ. **Վասըն հայրապետին մերոյ տեառըն տեառըն (այս անուն) սրբազնագոյն կաթողիկոսի կենաց եւ փրկութեան հոգւոյ նորին, ըզՏէր աղաչեսցուք:**

ԳՊՐ. **Տէր ողորմեա: Յիշեա Տէր եւ ողորմեա: Տէր ողորմեա: Քեզ Տեառնդ յանձն եղիցուք: Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:**

ԲՀՆ. **Ձի ողորմած եւ մարդասէր ես Աստուած գոլով, եւ քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:**

ՆՍՏԻԼ

Եւ ընթեռնուուն վճաշու գիրսն

ԳՊՐ. Այէլուիա, այէլուիա:

Յարեաւ Աստուած եւ ցրրուեցան ամենայն թշնամիք նորա: Փախեան ատելիք նորա
յերեսաց նորա:

ՈՏՔԻ ԿԱՆԳԵՒԼ

ՍՐԿ. Այէլուիա, օրթի:

ՔՀՆ. ✕ Խաղաղութիւն ամենեցուն:

ԳՊՐ. Եւ ընդ հոգւոյդ քում:

ՍՐԿ. Երկիւղածութեամբ լըւարուք:

ՍՐԿ. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ (Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու
կամ Յովհաննու):

ԳՊՐ. Փառք քեզ, Տէր, Աստուած մեր:

ՍՐԿ. Պուսխումէ:

ԳՊՐ. Ասէ Աստուած:

ՍՐԿ. (Ընթեռնու վԱւետարանն ըստ տօնացուցի):

ԳՊՐ. Փառք քեզ, Տէր, Աստուած մեր:

Ապա երգեն վՀանգանակն
Նիկիական վձեռսն ի մի ածեալ

ՀԱՆԳԱՆԱԿ ՆԻԿԻԱԿԱՆ

Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն ամենակալ, յարարիչն երկնի եւ երկրի,
երեւելեաց եւ աներեւութից:

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծընեալն յԱստուծոյ Հօրէ՝ միածին,
այսինքն յեութենէ Հօր: Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ
ճշմարտէ, ծընունդ եւ ոչ արարած: Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղեւ
յերկինքս եւ ի վերայ երկրի, երեւելիք եւ աներեւոյթք:

Որ յաղագրս մեր մարդկան եւ վասըն մերոյ փրրկութեան իջեալ ի յերկնից,
մարմնացաւ, մարդացաւ, ծընաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն, Հոգւովըն
Սրբրով: Որով էառ մարմին, հոգի եւ միտ եւ զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս եւ

ոչ կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինըս նովին մարմնովն՝ նըստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր, ի դատել ըզկենդանիս եւ ըզմեռեալս, որոյ թագաւորութեանըն ոչ գոյ վախճան:

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին, յանեղն եւ ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնըս եւ ի մարգարէս եւ յաւետարանս: Որ էջն ի Յորդանան, քարոզեաց յառաքեալսն եւ բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատամք եւ ի մի միայն, ընդհանրական եւ առաքելական սուրբ եկեղեցի, ի մի մըկըրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց: Ի յարութիւն մեռելոց, ի դատաստանըն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց, յարքայութիւնըն երկնից եւ ի կեանսըն յաւիտենականըս:

ՍԲԿ. Իսկ որք ասենըն՝ էր երբեմըն յորժամ ոչ էր Որդին, կամ էր երբեմն յորժամ ոչ էր Սուրբ Հոգին, կամ թէ՛ յոչէից եղեն կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ եւ կամ ըզՍուրբ Հոգին, եւ թէ՛ փոփոխելիք են կամ այլայլելիք, գայնպիսիսն նըզովէ կաթողիկէ եւ առաքելական սուրբ եկեղեցի:

ՔՀՆ. Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս երկիրպագանելով Սրբոյ Երրորդութեանն եւ միոյ Աստուածութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՍԲԿ. Եւ եւըս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

ԳՊԲ. Տէր ողորմեա:

ՍԲԿ. Եւ եւըս հաւատով աղաչեսցուք եւ խընդրեսցուք ի Տեառնէ Աստուծոյ եւ ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ ի ժամուս պաշտաման եւ աղօթից: Զի արժանի ընդունելութեան արասցէ, լըւիցէ Տէր ձայնի աղաչանաց մերոց: Ընկայցի ըզխընդըրուածըս սըրտից մերոց, թողցէ ըզյանցանըս մեր, ողորմեսցի ի վերայ մեր: Աղօթք մեր եւ խընդրուածք յամենայն ժամ մըտցեն առաջի մեծի տէրութեան նորա եւ նա տացէ մեզ միաբան միով հաւատով արդարութեան վաստակիլ ի գործս բարիս: Զի գողորմութեան ըզչնորհան իւր արասցէ ի վերայ մեր: Տէրն ամենակալ կեցուցէ եւ ողորմեսցի:

ԳՊԲ. Կեցո, Տէր: Շնորհեա Տէր, շնորհեա Տէր, շնորհեա Տէր: Տէր ողորմեա: Քեզ Տեառնը յանձն եղիցուք: Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

ՔՀՆ. Որպէսզի արժանաւորք եղիցուք գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ Սուրբ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն: ✠ Խաղաղութիւն ամենեցուն:

ԳՊԲ. Եւ ընդ հոգւոյդ քուս:

ՍԲԿ. Աստուծոյ երկիրպագեսցուք:

ԳՊԲ. Առաջի քո, Տէր:

ՔՀՆ. Խաղաղութեամբ քով Քրիստոս փրկիչ մեր, որ ի վեր է քան զամենայն միտս եւ զբանս, ամրացո զմեզ եւ աներկիւղ պահեա յամենայն չարէ: Հաւասարեա զմեզ ընդ ճշմարիտ

երկրպագուս քո, որք հոգևով եւ ճշմարտութեամբ քեզ երկիրպագանեն: Վասնզի ամենասուրբ Երրորդութեանդ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: **Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս: Ամէն:**

ՍՐԿ. **Օրհնեա, տէր:**

ՔՀՆ. ✘ **Տէր Աստուած օրհնեսցէ զամենեսեանդ:**

ԳՊՐ. **Ամէն:**

ՆՍՏԻԼ

ՀԱԻԱՏԱՑԵԼՈՑ ՊԱՏԱՐԱԳ

ՍՐԿ. **Մի՛ ոք յերախայից, մի՛ ոք ի թերահաւատից եւ մի՛ ոք յապաշխարողաց եւ յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդս:**

ԳՊՐ. **Մարմին տէրունական եւ արիւն փրկչական կայ առաջի, երկնային զօրութիւնքն յանրեւոյթս երգեն եւ ասեն անհանգիստ բարբառով. սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց:**

ՍՐԿ. **Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերում, դրպիրք, ճայնիւ քաղցրութեամբ զերգս հոգեւորս:**

ՈՏՔԻ ԿԱՆԳՆԻԼ ԿԱՄ ԾՈՒՆԿԻ ԳԱԼ

ՍՐԲԱՍԱՑՈՒԹԻՒՆ Կիւրակէի, Եկեղեցւոյ, Ծաղկապարոյի, Հոգեգալստեան

ԳՊՐ. **Հրեշտակային կարգաւորութեամբ լրցեր, Աստուած, գքո սուրբ զեկեղեցի:**
✘ **Հագարք հագարաց հրեշտակապետք կան առաջի քո եւ բիւրք բիւրուց հրեշտակք պաշտեն ըզքեզ, Տէր, եւ ի մարդկանէ հաճեցար ընդունիլ զօրհնութիւն, ճայնիւ խորհրդականաւ. սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց:**

(Այլ սրբասացութիւնս տես յերես 48)

Ի հանդիսի տօնի, բարձր ձայնիւ

ՔՀՆ. **Այէլուիա, այէլուիա:**

ՍՐԿ. **Համբարձէք իշխանք ըզդրունս ձեր ի վեր. համբարձցին դրունք յաւիտենից, եւ մրտցէ թագաւոր փառաց:**

ՔՀՆ. **Ո՞վ է սա թագաւոր փառաց. Տէր հզօր զօրութեամբ իւրով. Տէր կարող ի պատերազմի:**

ՍՐԿ. Համբարձէք իշխանք ըզդրունըս ձեր ի վեր. համբարձցին դրունք յաւիտենից, եւ մըտցէ թագաւոր փառաց:

ՔՀՆ. Ո՞վ է սա թագաւոր փառաց եւ Տէր զօրութեանց:

ՍՐԿ. Սա ինքն է թագաւոր փառաց:

ՔՀՆ. Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն: Օրհնեալ որ եկիր եւ գալոց ես:

ՍՐԿ. Եւ եւրս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

ԳՊՐ. Տէր ողորմեա:

ՍՐԿ. Եւ եւրս հաւատով եւ սրբութեամբ կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ ահիւ: Մի՛ խըղճիւ եւ գայթակղութեամբ. մի՛ նենգութեամբ, խորամանկութեամբ, մի՛ պատրանօք եւ խաբէութեամբ, մի՛ երկմըտութեամբ եւ մի՛ թերահաւատութեամբ: Այլ ուղիղ վարուք, պարզ մըտօք, միամիտ սրբտիւ, կատարեալ հաւատով, լրցեալ սիրով, լի եւ առաւելեալ ամենայն գործովք բարութեան կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ, եւ զըտցուք զողորմութեան ըզչնորհս, յաւուր յայտնութեան եւ ի միւսանգամ գալրստեան Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, կեցուցէ եւ ողորմեսցի:

ԳՊՐ. Կեցո, Տէր, եւ ողորմեա:

ՔՀՆ. Շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ որում քեզ՝ Հօր, միանգամայն եւ Հոգւոյ Սրբոյ, վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն: ✠ Խաղաղութիւն ամենեցուն:

ԳՊՐ. Եւ ընդ հոգւոյ քում:

ՍՐԿ. Աստուծոյ երկիրպագեսցուք:

ԳՊՐ. Առաջի քո, Տէր:

ՍՐԿ. Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան եւ որք ոչ էք կարողք հաղորդիլ աստուածային խորհրդոյս, առ դրունս ելէք եւ աղօթեցէք:

ԳՊՐ. *Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, որ էին Աստուած աստ բազմեցաւ. խաղաղութեան ձայն հրնչեցաւ, սուրբ ողջունի հրաման տրւաւ: Եկեղեցիս մի անձն եղեւ, համբոյրըս յօդ լըրման տրւաւ: Թըշնամութիւնըն հեռացաւ, սէրն յընդհանուրըս սփռեցաւ: Արդ պաշտօնեայք բարձեալ ըզձայն տուք զօրհնութիւն ի մի բերան, միասնական աստուածութեանն որում սրովբէքն են սրբաբան:

* Սարկաւագր խորանէն խաղաղութեան համբոյրը կը բերէ ժողովուրդին, ըսելով. «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»: Ստացողը կը պատասխանէ. «Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի»:

Ի հանդիսի տօնի

ՍՐԿ. Որք հաւատովք կայք յանդիման սուրբ սեղանոյս արքայական, տեսէք բազմեալ գործիստոս արքայն եւ շուրջ պատեալ գօրք վերնական:

ԳՊՐ. Վեր համբառնամք գաչս ունելով եւ պաղատիմք զայս ասելով. ըզմեղրս մեր մի՛ յիշեսցես, այլ գթութեամբ քո քաւեսցես: Ընդ հրեշտակացն օրհնեմք ըզքեզ եւ ընդ սրբոց քոց, Տէր, փառք քեզ:

ՍՐԿ. Ահիւ կացցուք, երկիւղիւ կացցուք, բարւոք կացցուք եւ նայեցարուք ըզգուշութեամբ:

ԳՊՐ. Առ քեզ, Աստուած:

ՍՐԿ. Պատարագ Քրիստոս մատչի անարատ Գառն Աստուծոյ:

ԳՊՐ. Ողորմութիւն եւ խաղաղութիւն եւ պատարագ օրհնութեան:

ՔՀՆ. Շնորհք, սէր եւ աստուածային սրբարար գօրութիւնն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ✠ եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան:

ՆՍՏԻԼ

ԳՊՐ. Ամէն: Եւ ընդ հոգւոյդ քում:

ՍՐԿ. Ըզդրրունս, ըզդրրունս, ամենայն իմաստութեամբ եւ ըզգուշութեամբ. ի վեր ընծայեցուցէք ըզմիտրս ձեր աստուածային երկիւղիւ:

ԳՊՐ. Ունիմք առ քեզ, Տէր ամենակալ:

ՍՐԿ. Եւ գոհացարուք ըզՏեառնէ բոլորով սրբաիւ:

ԳՊՐ. Արժան եւ իրաւ:

ՔՀՆ. Եւ ընդ սերովբէսն եւ ընդ քերովբէսն միաձայն սրբասացութեամբ յօրինել նուազս եւ համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նոսին եւ ասել.-

ՈՏՔԻ ԿԱՆԳՆԻԼ

ԳՊՐ. Սուրբ, սուրբ, սուրբ, Տէր գօրութեանց. լի են երկինք եւ երկիր փառօք քո. օրհնութիւն ի բարձունս, օրհնեալդ որ եկիր եւ զալոցդ ես անուամբ Տեառն: Ովսաննա ի բարձունս:

ՔՀՆ. Առէք, կերէք, այս է մարմին իմ, որ վասն ձեր եւ բազմաց բաշխի, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

ԳՊՐ. Ամէն:

ՔՀՆ. Արբէք ի սմանէ ամենեքեան, այս է արիւն իմ նորոյ ուխտի, որ յաղագս ձեր եւ բազմաց հեղանի, ի քաւուծիւն եւ ի թողուծիւն մեղաց:

ԳՊՐ. Ամէն: Հայր երկնաւոր, որ գորդիդ քո ետուր ի մահ վասըն մեր, պարտապան պարտեաց մերոց. հեղմամբ արեան նորա աղաչեմք ըզքեզ, ողորմեա քո բանաւոր հօտի:

ՔՀՆ. Եւ գքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն:

ԳՊՐ. Յամենայնի օրհնեալ ես, Տէր, օրհնեմք ըզքեզ, գովեմք ըզքեզ, գոհանամք ըզքէն, աղաչեմք ըզքեզ, Տէր Աստուած մեր:

ՍՐԿ. Օրհնեա, տէր:

ՔՀՆ. ✠ Խաղաղութիւն ամենեցուն:

ԳՊՐ. Եւ ընդ հոգւոյդ քում:

ՍՐԿ. Աստուծոյ երկիրպագեսցուք:

ԳՊՐ. Առաջի քո, Տէր: Որդի Աստուծոյ, որ պատարագեալ Հօր ի հաշտութիւն հաց կենաց բաշխիս ի մեզ. հեղմամբ արեան քո սուրբ, աղաչեմք ըզքեզ, ողորմեա արեամբ քով փրկեալ հօտի:

ՔՀՆ. Որպէսզի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս՝ յանդատապարտութիւն, ի քաւուծիւն եւ ի թողուծիւն մեղաց:

ԳՊՐ. Հոգի Աստուծոյ, որ զփառակցի քո զխորհուրդ, իջեալ ի յերկնից. կատարես ի ձեռն մեր. հեղմամբ արեան սորա, աղաչեմք ըզքեզ, հանգո զհոգիս մեր ննջեցելոցն:

ՆՍՏԻԼ

ՔՀՆ. Ընդ որս եւ մեզ այց արասցես բարերար Աստուած, աղաչեմք:

ԳՊՐ. Յիշեա, Տէր, եւ ողորմեա:

ՔՀՆ. Աստուածածնին սրբոյ կուսին Մարիամու եւ Յովհաննու Մկրտչին, Ստեփանոսի Նախավկային եւ ամենայն սրբոց. եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

ԳՊՐ. Յիշեա, Տէր, եւ ողորմեա:

ՍՐԿ. Առաքելոց սրբոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց եւ ամենայն հայրապետաց սրբոց: Առաքելագործ եպիսկոպոսաց, երիցանց, ուղղափառ սարկաւազաց եւ ամենայն սրբոց. եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

ԳՊՐ. Յիշեա, Տէր, եւ ողորմեա:

Ի տօնի սրբոց վայս ասա.

ՍՐԿ. Սուրբ եւ աստուածահաճոյ (այս անուն) որոյ (կամ՝ որոց) այօր գլխատակն կատարեցաք: Եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս աղաչեմք:

ԳՊՐ. Յիշեա, Տէր, եւ ողորմեա:

ՍՐԿ. Օրհնեալ, գովեալ եւ փառաւորեալ, հրաշալի եւ աստուածագարդ յարութեանն Քրիստոսի երկիրպագանեմք:

ԳՊՐ. Փառք յարութեան քո, Տէր:

ՍՐԿ. Առաջնորդացն մերոց եւ առաջին լուսաւորչացն՝ սրբոց Թադէոսի եւ Բարթողիմէոսի առաքելոցն, եւ Գրիգորի Լուսաւորչին, Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի, Ներսիսի, Սահակայ, Դանիէլի եւ Խաղայ, Մեսրոպայ Վարդապետին եւ Գրիգորի Նարեկացւոյն եւ Ներսիսի Կըլայեցւոյն, Յովհաննու Որոտնեցւոյն, եւ Գրիգորի եւ Մովսիսի Տաթեւացեացն, եւ սրբոց Գրիգորիսեանց եւ Ներսիսեանց, հովուաց եւ հովուապետացն Հայաստանեայց. եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

ԳՊՐ. Յիշեա, Տէր, եւ ողորմեա:

ՍՐԿ. Միանձնացելոց սրբոց, առաքինասէր եւ աստուածոլսոյց կրօնաւորացն Պօղոսի, Անտոնի, Պօղայ, Մակարայ, Ոնոփրիոսի, Աբբայ Մարկոսի, Սրապիոնի, Նեղոսի, Արսէնի, Եւագրի, Պարսամայ, Յովհաննիսեանց եւ Սիմէոնեանց, սրբոց Ոսկեանց եւ Սուքիասանց, եւ ամենայն սրբոց հարց եւ աշակերտելոց նոցին ընդ տիեզերս. եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

ԳՊՐ. Յիշեա, Տէր, եւ ողորմեա:

ՍՐԿ. Թագաւորաց հաւատացելոց սրբոցն՝ Աբգարու, Կոստանդիանոսի, Տրդատայ եւ Թէոդոսի, եւ ամենայն սուրբ եւ բարեպաշտ թագաւորաց եւ աստուածասէր իշխանաց. եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

ԳՊՐ. Յիշեա, Տէր, եւ ողորմեա:

ՍՐԿ. Ընդհանուր ամենայն հաւատացելոց, արանց եւ կանանց, ծերոց եւ տրդայոց եւ ամենայն չափու հասակի հաւատով եւ սրբութեամբ ի Քրիստոս նընջեցելոցն. եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

ԳՊՐ. Յիշեա, Տէր, եւ ողորմեա:

ՈՏՔԻ ԿԱՆԳՆԻԼ

ՔՀՆ. Եւս առաւել զեպիսկոպոսապետն մեր եւ զպատուական հայրապետն ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ գտէր տէր (այս անուն) սրբազնագոյն կաթողիկոս: Եւ վիճակիս

բարեջան առաջնորդն գտէր (այս անուն) սրբազան արքեպիսկոպոս: Շնորհեսցես մեզ ընդ երկայն ակուրս ուղիղ վարդապետութեամբ:

ՍՐԿ. Գոհութիւն եւ փառաբանութիւն մատուցանեմք քեզ Տէր Աստուած մեր: Վասըն սուրբ եւ անմահ պատարագիս որ ի վերայ սրբոյ սեղանոյս. զի ըզսա մեզ ի սրբութիւն կենդանութեան պարգեւեսցես: Սովաւ շնորհեա ըզսէր, զհաստատութիւն եւ զըղծալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի, սրբոյ եկեղեցոյ եւ ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց: Եւ եպիսկոպոսապետին մերոյ եւ պատուական հայրապետին ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ տեառըն տեառըն (այս անուն) սրբազնագոյն կաթողիկոսի. եւ վիճակիս բարեջան առաջնորդին մերոյ տեառըն (այս անուն) սրբազան արքեպիսկոպոսի. եւ քահանայիս որ ըզպատարագըս մատուցանէ:

Եւ վասըն զօրութեանց եւ յաղթութեանց թագաւորաց քրիստոնէից եւ իշխանացըն բարեպաշտից: Աղաչեսցուք եւ խընդրեսցուք եւ վասն հոգւոցն հանգուցելոց: Եւս առաւել վասն հանգուցեալ ըբուռնապետացն մերոց եւ շինողաց սրբոյ եկեղեցոյս եւ որք ընդ հովանեաւ սորին են հանգուցեալ: Ազատութիւն եղբարց մերոց գերելոց եւ շընորհ առաջիկայ ժողովրդեանս, հանգիստ հաւատով եւ սրբութեամբ ի Քրիստոս կատարելոցն. եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

ԳՊՐ. Ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն:

ԲՀՆ. Եւ եղիցի ողորմութիւն մեծիս Աստուծոյ եւ փրկչիս մերոյ Յիսուսի Քրիստոսի, ✠ ընդ ձեզ ընդ ամենեսեան:

ՆԱՏԻԼ

ԳՊՐ. Ամէն: Եւ ընդ հոգւոյդ քում:

ՍՐԿ. Եւ եւրս խաղաղութեան ըզՏէր աղաչեսցուք:

ԳՊՐ. Տէր ողորմեա:

ՍՐԿ. Ամենայն սրբովք գորըս յիշատակեցաք եւրս առաւելապէս, ըզՏէր աղաչեսցուք:

ԳՊՐ. Տէր ողորմեա:

ՍՐԿ. Վասըն մատուցեալ սուրբ եւ աստուածային անմահ պատարագիս, որ ի վերայ սրբոյ սեղանոյս, ըզՏէր աղաչեսցուք:

ԳՊՐ. Տէր ողորմեա:

ՍՐԿ. Որպէսզի Տէր Աստուած մեր որ ընկալաւ ըզսա ի սուրբ, յերկնային եւ յիմանալի իւր մատուցարանն, ըզփոխանակն առաքեսցէ առ մեզ ըզշնորհս եւ ըզպարգեւըս Հոգւոյն Սրբոյ, ըզՏէր աղաչեսցուք:

ԳՊՐ. Տէր ողորմեա:

ՄՐԿ. *Ընկալ, կեցո եւ ողորմեա, եւ պահեա ըզմեզ, Տէր, քոյին շնորհիւղ:*

ԳՊՐ. *Կեցո, Տէր, եւ ողորմեա:*

ՄՐԿ. *Ձամենասրբուհի գԱստուածածինն ըզմիշտ կոյսըն Մարիամ հանդերձ ամենայն սրբբովք յիշելով, ըզՏէր աղաչեսցուք:*

ԳՊՐ. *Յիշեա, Տէր, եւ ողորմեա: Տէր ողորմեա: Քեզ Տեառնըդ յանձն եղիցուք: Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:*

ՔՀՆ. *Եւ տուր մեզ համարձակաձայն բարբառով բանալ ըզբերանըս մեր, կարդալ ըզքեզ երկնաւորըդ Հայր, երգել եւ ասել:-*

ՈՏՔԻ ԿԱՆԳՆԻԼ

ԳՊՐ. *Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո: Եկեսցէ արքայուլթիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի: Չհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: Թող մեզ ըզպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձուլթիւն. այլ փրկեա ի չարէ:*

ՔՀՆ. *Ձի քո է արքայուլթիւն եւ զօրուլթիւն եւ փառք յաւիտեանս: Ամէն: ✠ Խաղաղուլթիւն ամենեցուն:*

ԳՊՐ. *Եւ ընդ հոգւոյդ քում:*

ՄՐԿ. *Աստուծոյ երկիրպագեսցուք:*

ԳՊՐ. *Առաջի քո, Տէր:*

ՔՀՆ. *Քրիստոսիւ, Յիսուսիւ Տէրամբ մերով, ընդ որում քեզ Հոգւոյդ Սրբոյ եւ Հօր ամենակալի վայել է փառք, իշխանուլթիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:*

ՄՐԿ. *Պուօսխումէ:*

ՔՀՆ. *Ի սրբուլթիւն սրբոց:*

ԳՊՐ. *Միայն սուրբ, միայն Տէր, Յիսուս Քրիստոս, ի փառս Աստուծոյ Հօր: Ամէն:*

ՔՀՆ. *Օրհնեալ Հայր Սուրբ, Աստուած ճշմարիտ:*

ԳՊՐ. *Ամէն:*

ՔՀՆ. *Օրհնեալ Որդիդ Սուրբ, Աստուած ճշմարիտ:*

ԳՊՐ. *Ամէն:*

ՔՀՆ. *Օրհնեալ Հոգիդ Սուրբ, Աստուած ճշմարիտ:*

ԳՊՐ. *Ամէն:*

ՔՀՆ. *Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:*

ԳՊՐ. *Ամէն: Հայր Սուրբ, Որդիդ Սուրբ, Հոգիդ Սուրբ: Օրհնութիւն Հօր եւ Որդւոյ եւ Սրբոյ Հոգւոյն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:*

ՔՀՆ. *Ի սուրբ, ի սուրբ, պատուական մարմնոյ եւ յարենէ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի ճաշակեցողք սրբութեամբ, որ իջեալ ի յերկնից բաշխի ի միջի մերում: Ք Սա է կեանք, յոյս, յարութիւն, քաւութիւն եւ թողութիւն մեղաց: Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերում, սաղմոս ասացէք երկնաւոր թագաւորիս մերում անմահի, որ նստի ի կառս քերովբէականս:*

ՆՍՏԻԼ

ԳՊՐ. *Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:*

ՍՐԿ. *Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:*

ԳՊՐ. *Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:*

ՍՐԿ. *Եւ հիւանդաց բըժըշկութիւն, նընջեցելոց արքայութիւն:*

Կամ

ԳՊՐ. *Արի Աստուած հարցըն մերոց, որ ապաւէնդ ես նեղելոց:*

ՍՐԿ. *Հաս յօգնութիւն ծառայից քոց, լեր օգնական ազգիս Հայոց:*

ԳՊՐ. *Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս փրկիչ, մեզ ողորմեա:*

ՍՐԿ. *Միջնորդութեամբ սուրբ եւ անմահ եւ կենարար պատարագիս:*

ԳՊՐ. *Ընկալ, Տէր, եւ ողորմեա:*

ՍՐԿ. *Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերում, դըպիրք, ճայնիւ քաղցրութեամբ զերգըս հոգեւորս: Զի սըմա վայել են սաղմոսք եւ օրհնութիւնք, այլելութք եւ երգըք հոգեւորք: Պաշտօնեայք, հանդերձ երգովք սաղմոս ասացէք եւ ըզՏէր յերկինս օրհնեցէք:*

ՈՏՔԻ ԿԱՆԳՆԻԼ

ԳՊՐ. *Օրհնեալ է Աստուած:*

Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում. այլելուիա:

Զմարմին իւր տայ մեզ կերակուր եւ սուրբ զարիւն իւր ցօղէ ի մեզ. այլելուիա:

Մատիք առ Տէր եւ առէք ըզլոյս· այլ լուհա:
Ճաշակեցէք եւ տեսէք զի քաղցր է Տէր· այլ լուհա:
Օրհնեցէք ըզՏէր ի յերկինս· այլ լուհա:
Օրհնեցէք ըզնա ի բարձունս· այլ լուհա:
Օրհնեցէք ըզնա ամենայն հրեշտակք նորա· այլ լուհա:
Օրհնեցէք ըզնա ամենայն զօրութիւնք նորա· այլ լուհա:

ԾՈՒՆԿԻ ԳԱԼ ԿԱՄ ՆՍՏԻԼ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

ՄԻԱՍԻՆ. *Մեղայ ամենասուրբ Երրորդութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:*
Մեղուցեալ եմ Աստուծոյ: Խոստովանիմ առաջի Աստուծոյ եւ սրբուհւոյ Աստուածածնին, եւ
առաջի քո, հայր սուրբ, զամենայն մեղս զորս գործեալ եմ: Քանզի մեղայ խորհրդով, բանիւ
եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, մեղայ Աստուծոյ:

ՔՀՆ. *Աստուած թողութիւն շնորհեսցէ:*

ՄԻԱՍԻՆ. *Այլ եւ մեղայ եօթնիցս յանցանօք՝ մահացու մեղօք.- Հպարտութեամբ, նախանձու,*
բարկութեամբ, ծուլութեամբ, ազահուութեամբ, որկրամոլութեամբ, բղջախոհութեամբ եւ
մասամբք սոցին, մեղայ Աստուծոյ:

ՔՀՆ. *Աստուած թողութիւն շնորհեսցէ:*

ՄԻԱՍԻՆ. *Այլ եւ մեղայ ամենայն պատուիրանացն Աստուծոյ, յանձնառելեացն եւ*
հրաժարելեացն, զի ոչ գյանձնառականսն կատարեցի եւ ոչ ի հրաժարելեացն հեռացայ:
Զօրէնս առի՝ եւ յօրինացն հեղգացայ. ի կարգս քրիստոնէութեան հրաւիրեցայ եւ գործովս
անարժան գտայ. գիտելով զչարն կամաւ կորացայ, եւ ի բարեաց գործոց ես ինձէն հեռացայ.
վա՛յ ինձ, վա՛յ ինձ, վա՛յ ինձ: Զո՞րն ասեմ կամ զո՞րն խոստովանիմ, զի անթիւ են յանցանք
իմ, անասելի են անօրէնութիւնք իմ, աններելի են ցաւք իմ եւ անբժշկելի են վէրք իմ, մեղայ
Աստուծոյ:

ՔՀՆ. *Աստուած թողութիւն շնորհեսցէ:*

ՄԻԱՍԻՆ. *Հայր սուրբ, զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան եւ բարեխօս առ միածին Որդին*
Աստուծոյ, զի իշխանութեամբդ որ տուեալ է քեզ, արձակեսցես զիս ի կապից մեղաց իմոց,
աղաչեմ զքեզ:

ԱՐՁԱԿՈՒՄՆ

ՔՀՆ. *Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:*

Ողորմեսցի քեզ մարդասէրն Աստուած եւ թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց
քոց, խոստովանացելոցն եւ մոռացելոցն: Եւ ես կարգաւս քահանայական իշխանութեան եւ
հրամանաւն աստուածային՝ թէ՛ զոր ինչ արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս,
նովին բանիւն արձակեմ զքեզ յամենայն մասնակցութենէ մեղաց քոց, ի խորհրդոց, ի բանից
եւ ի գործոց, յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Եւ դարձեալ տամ զքեզ ի խորհուրդս

սուրբ եկեղեցւոյ, զի զոր ինչ գործիցես բարիա, եղիցի քեզ ի բարեգործութիւն եւ ի փառս հանդերձեալ կենացն: Ամէն:

ՈՏՔԻ ԿԱՆԳՆԻԼ

ՍՐԿ. Երկիւղիւ եւ հաւատով յառաջ մատիք եւ սրբութեամբ հաղորդեցարուք:

ԳՊՐ. Աստուած մեր եւ Տէր մեր երեւեցաւ մեզ, օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

ՔՀՆ. Կեցո, Տէր, զժողովուրդս քո եւ Քօրհնեա զժառանգութիւնս քո, հովուեա եւ բարձրացո զսոսա յայսմհետէ մինչեւ յաւիտեան:

ԳՊՐ. Լրցաք ի բարութեանց քոց, Տէր, ճաշակելով ըզմարմին քո եւ զարիւն. փառք ի բարձունըս կերակրողիդ ըզմեզ: Որ եւ հանապազ կերակրես ըզմեզ, առաքեա ի մեզ ըզհոգեւոր քո զօրհնութիւն. փառք ի բարձունըս կերակրողիդ ըզմեզ:

ՍՐԿ. Եւ եւրս խաղաղութեան ըզՏէր աղաչեսցուք:

ԳՊՐ. Տէր ողորմեա:

ՍՐԿ. Եւ եւրս հաւատով ընկալեալք յաստուածային, սուրբ, երկնային, անմահ, անարատ եւ անապական խորհրդոյս, ըզՏեառնէ զոհացարուք:

ԳՊՐ. Գոհանամք ըզքէն, Տէր, որ կերակրեցեր ըզմեզ յանմահական սեղանոյ քո: Բաշխելով ըզմարմինդ եւ զարիւնդ ի փրկութիւն աշխարհի: Եւ կեանք անձանց մերոց:

ԱՐՁԱԿՈՒՄՆ

ՔՀՆ. Որ օրհնես զայնոսիկ, որք օրհնեն զքեզ, Տէր, եւ սուրբ առնես զյուսացեալս ի քեզ:

ԳՊՐ. Օրհնեալ է Աստուած:

ՔՀՆ. Կեցո զժողովուրդս քո եւ օրհնեա զժառանգութիւնս քո, զլրումն եկեղեցւոյ քո պահեա:

ԳՊՐ. Ամէն:

ՔՀՆ. Սրբեա զսոսա որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քո, դու զմեզ փառաւորեա աստուածային զօրութեամբ քով եւ մի՛ թողուր զյուսացեալս ի քեզ:

ԳՊՐ. Ամէն:

ՔՀՆ. Զխաղաղութիւն պարգեւեա ամենայն աշխարհի, եկեղեցեաց, քահանայից, թագաւորաց քրիստոնէից, հայրապետութեան եւ հանրապետութեան ազգիս Հայոց, եւ

հանրապետութեան Միացեալ նահանգացն Ամերիկայի, եւ գինուորեալ մանկանց նոցա եւ ամենայն ժողովրդեանս:

ԳՊՐ. Ամէն:

ԲՀՆ. Ձի ամենայն տուրք բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալք առ ի քէն, որ ես Հայր լուսոյ. եւ քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԳՊՐ. Ամէն: Եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսրմհետէ մինչեւ յաւիտեան: Եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսրմհետէ մինչեւ յաւիտեան: Եւ եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսրմհետէ մինչեւ յաւիտեան:

ԲՀՆ. Կատարումն օրինաց եւ մարգարէից դու ես, Քրիստոս Աստուած փրկիչ մեր, որ լըցեր զամենայն հայրակամ տնօրէնութիւնս քո. լից եւ զմեզ Հոգւովդ քով Սրբով*:

ՍՐԿ. Օրթի:

ԲՀՆ. ✕ Խաղաղութիւն ամենեցուն:

ԳՊՐ. Եւ ընդ հոգւոյդ քում:

ՍՐԿ. Երկիւղածութեամբ լուարուք:

ԲՀՆ. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու(1.1-14):

ԳՊՐ. Փառք քեզ, Տէր, Աստուած մեր:

ՍՐԿ. Պառսխումէ:

ԳՊՐ. Ասէ Աստուած:

ԲՀՆ. Ի Հօրէ լուսոյ:

Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն: Նա էր ի սկզբանէ առ Աստուած:

Ամենայն ինչ նովաւ եղեւ, եւ առանց նորա եղեւ եւ ոչինչ որ ինչ եղեւն: Նովաւ կեանք էր, եւ կեանքն էր լոյս մարդկան. եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ, եւ խաւար նմա ո՛չ եղեւ հասու:

Եղեւ այր մի առաքեալ յԱստուծոյ, անուն նմա Յովհաննէս. սա եկն ի վկայութիւն՝ զի վկայեսցէ վասն լուսոյն, զի ամենեքին հաւատասցեն նովաւ: Ո՛չ էր նա լոյսն, այլ զի վկայեսցէ վասն լուսոյն: Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ:

Յաշխարհի էր, եւ աշխարհ նովաւ եղեւ, եւ աշխարհ զնա ո՛չ ծանեաւ: Յիւրսն եկն, եւ իւրքն զնա ո՛չ ընկալան: Իսկ որք ընկալանն զնա՝ ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել՝ որոց հաւատասցեն յանուն նորա: Ոյք ո՛չ յարենէ, եւ ո՛չ ի կամաց մարմնոյ, եւ ո՛չ ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան:

Եւ Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ. եւ տեսաք զփառս նորա, զփառս իբրեւ զմիածնի առ ի Հօրէ, լի շնորհօք եւ ճշմարտութեամբ:

ՍՐԿ. Փառք քեզ, Տէր, Աստուած մեր:

* * Հոգեհանգստեան պաշտօնը տե՛ս էջ 33:

Սուրբ խաչիւրս աղաչեսցուք ըզՏէր, զի սովաւ փրրկեսցէ ըզմեզ ի մեղաց եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա:

ՔՀՆ. Պահպանիչ եւ յոյս հաւատացելոց, Քրիստոս Աստուած մեր, պահեա, պահպանեա եւ օրհնեա զժողովուրդս քո որ յառաջակայ, ընդ հովանեաւ սուրբ եւ պատուական խաչի քո ի խաղաղութեան: Փրկեա յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն. արժանաւորեա զոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանրս յաւիտենից: Ամէն:

ԳՊՐ. Օրհնեցից ըզՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ, օրհնութիւն նորա ի բերան իմ:
ՔՀՆ. ✠ Օրհնեալք եղերուք ի շնորհաց Սրբոյ Հոգւոյն, երթայք խաղաղութեամբ, եւ Տէր եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ: Ամէն:



Սուրբ Պատարագի աւարտին, հաւատացեալները կը յառաջանան դէպի խո-րան եւ կը համբուրեն Սուրբ Աւետարանը, ըսելով.

– Յիշեսցէ Տէր զպատարագս քո եւ զամենայն ուխտս քո ընդունելի արասցէ: (Տէրը թող յիշէ պատարագներդ եւ բոլոր ուխտերդ ընդունելի ընէ):

Պատարագիչը կը պատասխանէ.

– Տացէ քեզ Տէր ըստ սրտի քում եւ զամենայն ինդրուածս քո նա կատարեսցէ: (Թող Տէրը քո սրտիդ համաձայն տայ եւ բոլոր ինդրանքներդ ինք կատարէ):

Ապա, եկեղեցիէն դուրս ելլելու ժամանակ, հաւատացեալները օրհնուած մասը (անթթիմոր բարակ հաց) կ'առնեն ըսելով.

– Բաժին իմ Աստուած յաւիտեան:

ՊԱՇՏՕՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ

ՍՐԿ. Եւ եւրա խաղաղութեան ըզՏէր աղաչեսցուք, ընկալ, կեցո եւ ողորմեա:

ՔՀՆ. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԴՊՐ. Որ յանէից ստեղծող քոյից արարչակից Հօր Բանդ Աստուած, թողութիւն շնորհեա նընջեցելոց քոց ծառայից, յորժամ գաս դատել զոր անարատ ձեռօք ստեղծեր:

Որ պըսակիչդ ես քոց սրբոց եւ անվախճան բարեաց բաշխող, թողութիւն շնորհեա նընջեցելոց քոց ծառայից, յորժամ գաս դատել զոր անարատ ձեռօք ստեղծեր:

Կամ

Գըթա, Տէր, ի հոգիս մեր նընջեցելոցն եւ յիշեա ողորմութեամբ, քանզի գինք սուրբ արեան քո են. ի յորժամ հրաշալի ձայնիւ փողոյն յառնեն մեռեալքն եւ կան առաջի ահաւոր քո բեմին:

ԴՊՐ. Ալէլուիա, ալէլուիա:

Ի խորոց կարգացի առ քեզ, Տէր, Տէր, լուր ձայնի իմում: Եղիցին ականջք քո ի լըսել ըզձայն աղօթից իմոց:

ՍՐԿ. Ալէլուիա, օրթի:

ՔՀՆ. X Խաղաղութիւն ամենեցուն:

ԴՊՐ. Եւ ընդ հոգւոյդ քում:

ՍՐԿ. Երկիւղածութեամբ լըւարուք:

ՔՀՆ. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու: (12.24-26)

ԴՊՐ. Փառք քեզ, Տէր, Աստուած մեր:

ՍՐԿ. Պուսխումէ:

ԴՊՐ. Ասէ Աստուած:

ՔՀՆ. Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի՝ ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ: Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա. եւ որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ, ի կեանսն յաւիտենականս պահեսցէ զնա: Եթէ ոք

զիս պաշտիցէ, զկնի իմ եկեսցէ. եւ ուր եսն եմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի: Եթէ ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ:

ԴՊՐ. Քահանայք եւ ժողովուրդք հայցեմք ի քէն, Տէր բարեգութ. ընդ նրնջեցեալսն հաւատով ընկալ ըզմեզ նովին յուսով. յԵրուսաղէմ քաղաք վերին յորում արդարքն ժողովին, փառս վերերգել միշտ ընդ նոսին Երրորդութեանդ երրեակ անձին:

Ի վերին Երուսաղէմ ի բնակարանս հրեշտակաց ուր Ենովք եւ Եղիաս կան ծերացեալ աղանակերպ, ի դրախտին եղեմական պայծառս-ցեալ արժանապէս. ողորմած Տէր, ողորմեա հոգւոցն մեր նրնջեցելոց:

ՔՀՆ. Հոգւոցն հանգուցելոց, Քրիստոս Աստուած, արա հանգիստ եւ ողորմութիւն, եւ մեզ՝ մեղաւորաց շնորհեա զթողութիւն յանցանաց:

ՍՐԿ. Եւ եւրա խաղաղութեան ըզՏէր աղաչեսցուք:

Վասն հանգուցեալ հոգւոցն ա-ղաչեսցուք ըզփրկիչն մեր Քրիստոս, զի ըզնոսա ընդ արդարսն դասեսցէ, եւ ըզմեզ կեցուցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա:

ՔՀՆ. Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Քրիստոս Որդի Աստուծոյ անխակալ եւ բարեգութ, գթա քո արարչական սիրովդ ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց: Յիշեա յաւուր մեծի գալստեան արքայութեան քո: Արա արժանի ողորմութեան, քաւութեան եւ թողութեան մեղաց: Դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո յաջակողմեան դասուն, զի դու ես Տէր եւ արարիչ ամենեցուն, դատաւոր կենդանեաց եւ մեռելոց: Եւ քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՔՀՆ. Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս: Ամէն:

ԴՊՐ. Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո: Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի: Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: Թող մեզ ըզպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն. այլ փրկեա ի չարէ:

ՔՀՆ. Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս: Ամէն:

ԴՊՐ. Օրհնեցից ըզՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ, օրհնութիւն նորա ի բերան իմ:

ՔՀՆ. X Օրհնեալք եղերուք ի շնորհաց Սրբոյ Հոգւոյն, երթալք խաղաղութեամբ, եւ Տէր եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ: Ամէն:

Սուրբ Պատարագի աւարտին, հաւատացեալները կը յառաջանան դէպի խորան եւ կը համբուրեն Սուրբ Աւետարանը, ըսելով.

– Յիշեսցէ Տէր զպատարագս քո եւ զամենայն ուխտս քո ընդունելի արասցէ: (Տէրը թող յիշէ պատարագներդ եւ բոլոր ուխտերդ ընդունելի ընէ):

Պատարագիչը կը պատասխանէ.

– Տացէ քեզ Տէր ըստ սրտի քում եւ զամենայն խնդրուածս քո նա կա-տարեսցէ: (Թող Տէրը քու սրտիդ համաձայն տայ եւ բոլոր խնդրանքներդ ինք կատարէ):

Ապա, եկեղեցիէն դուրս ելլելու ժամանակ, հաւատացեալները օրհնուած մասը (անթթխմոր բարակ հաց) կ'առնեն ըսելով.

– Բաժին իմ Աստուած յաւիտեան:

ՅԱԻԵԼՈՒԱԾ

ՍԱՀՄՈՍ ԼՈՒԱՑՄԱՆ ԻԵ. (ԻԶ.)

Այլընտրանք, այլընտրանք:

Լրացրե՛ք սրբությունները ըզձեռքս իմ, եւ շուրջ եղէջ ըզսեղանով քով, Տէր:

Դատ արա ինձ, Տէր, զի ես յամբ- բըծութեան իմում գընացի. ի Տէր յուսացայ զի մի՛ եղէջ հիւանդ:

Փորձեա զիս, Տէր, եւ քննեա զիս, փորձեա զերկամունքս իմ եւ ըզսիրտ իմ:

Ողորմութիւն քո, Տէր, առաջի աչաց իմոց, եւ հաճոյ եղէջ ճըշմարտութեան քում:

Ոչ նըստայց ես յաթոռուս նանրաց, եւ ընդ անօրէնքս ես ոչ մըտից:

Ատեցի ես ըզժողովըս չարաց, եւ ընդ ամբարիշտըս ես ոչ նըստայց:

Լրացրե՛ք սրբությունները ըզձեռքս իմ, եւ շուրջ եղէջ ըզսեղանով քով, Տէր:

Լըսել ինձ ըզձայն օրհնութեան քո, եւ պատմել զամենայն ըսքանչելիս քո:

Տէր, սիրեցի ըզվայելչութիւն տան քո, եւ ըզտեղի յարկի փառաց քոց:

Մի՛ կորուսաներ ընդ ամբարիշտըս զանձն իմ, եւ մի՛ ընդ արըս արիւնահեղըս ըզկեանս իմ:

Որոց ձեռք իւրեանց յանօրէնութեան են, եւ աջ նոցա լի է կաշառօք:

Ես յամբըծութեան իմում գը- նացի, փրկեա զիս, Տէր, եւ ողոր- մեա ինձ:

Ոտն իմ կացցէ յուղղութեան:

Յեկեղեցիս մեծըս օրհնեցից ըզ- քեզ:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոց:

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանըս յաւիտենից: Ամէն:

ՄԵՂԵԴԻՔ

Ծննդեան եւ Աստուածածնի

Վարանիմ ի մեղաց, դու ազատիչ մեղուցելոյս, ո՛վ Տիրամայր, ո՛հ, ո՛վ Տիրամայր, ո՛հ, ցօղեա կաթիլ մի կուսական գօրեղ կենաց, ո՛հ գօրեղ կենաց:

Յիմ նախկին վայելմանց արժանապէս արտաքսեցայ, ո՛հ, եղկելոյս, ո՛հ, եղկելոյս. ո՛հ, փուշ եւ տատասկ բուսոյց երկիր ողորմելոյս, ո՛հ, ողորմելոյս:

Խաչի

Նըչանի Տեառն Աստուծոյ մերոյ փայլեալ ի նաւակատիսն որ յերուսաղէմ:

ՇԱՐԱԿԱՆՔ ԽՆԿԱՐԿՈՒԹԵԱՆ

Ծննդեան ԴԿ.

Խորհուրդ մեծ եւ սքանչելի որ յայսմ աւուր յայտնեցաւ. հովիւք երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի:

Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի. որդիք մարդկան օրհնեցէք, զի վասըն մեր մարմնացաւ:

Անբաւելին երկնի եւ երկրի ի խանձարուրս պատեցաւ. ոչ մեկնելով ի Հօրէ ի սուրբ այրին բազմեցաւ:

Զատկի ԱԶ.

Այսօր յարեալ ի մեռելոց փեսայն անմահ եւ երկնաւոր. քեզ աւետիք խընդուլթեան հարսն ի յերկրէ եկեղեցի. օրհնեա ի ձայն ցընծուլթեան զԱստուած քո Սիրոն:

Այսօր անձառ լոյսն ի լուսոյ լուսաւորեաց զմանկունըս քո, լուսաւորեա Երուսաղէմ, քանզի յարեալ լոյս քո Քրիստոս. օրհնեա ի ձայն ցընծուլթեան զԱստուած քո Սիրոն:

Այսօր խաւարն անգիտութեան հալածեցաւ երրեակ լուսովն. եւ քեզ ծագեաց լոյս գիտութեան յարուցեալն ի մեռելոց Քրիստոս. օրհնեա ի ձայն ցընծուլթեան զԱստուած քո Սիրոն:

Վերափոխման

Սուրբ Աստուածածնի ԴԶ.

Այսօր ժողովեալ սրբոցն ի միասին երանելի առաքեալքն եւ սուրբ կուսանքն ջահագգեստուք պայծառացեալք լուցանէին ըզլապտերս իւրեանց. եւ միաձայնեալ ասէին, օրհնեալ ես ամենօրհնեալդ ի կանայս:

Այսօր դնելով ըզսուրբ Կոյսն առ դրանըն գերեզմանին, սպասէին եւ ակն ունէին Տեառն իսկ ինքնին գոլով, գեր ի վերոյ տեսեալ զարարիչն եկեալ բազում հրեշտակօք. եւ նոցա միաձայնեալ ասէին, օրհնեալ ես ամենօրհնեալդ ի կանայս:

Այսօր տեսեալ ըզսուրբ Կոյսըն թռուցեալ յօղս, եւ ամպեղէն կառօքն ի վեր համբարձեալ յերկինս. մըտանելով յերկնային խորանսն ընդ իմաստուն կուսանսն. եւ նոցա միաձայնեալ ասէին, օրհնեալ ես ամենօրհնեալդ ի կանայս:

Վերացման Խաչի ԱԶ.

Որ գանարատ բազուկըս քո ի խաչին տարածեցեր Քրիստոս Աստուած, եւ նրչան յաղթութեան ետուր մեզ. սովաւ ըզկեանըս մեր պահեա:

Որ գաչխարհակեցոյց բազկատարածութիւն խաչի քո Քրիստոս Աստուած գաւազան գօրութեան ետուր մեզ. սովաւ ըզկեանըս մեր պահեա:

Որ ըզմեռեալն ի ճաշակմանէ փայտին յանցանաց, կենաց փայտի-ւրն կենագործեցեր. սովաւ ըզկեանըս մեր պահեա:

ԺԱՄԱՍՈՒՏՔ

**Ճրագալուցի Ծննդեան
եւ Վերափոխման Աստուածածնի**

Աստուածածին անհարսնացեալ՝ ըզԲանն անըսկիզբըն յըղացար եւ զԱստուածն անիմանալի ծընար, զանպարագրելին ի գիրկըս քո բարձեր, նրմա անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց:

Ծննդեան

Աստուածածին ըզքեզ խոստովանեալ երկրրպագէ եկեղեցի ուղղափառաց. քանզի ուր քերովբէքըն բազմաչեայք եւ աթոռք հրանիւթք եւ վեցթեւեան սերովբէքըն նայիլ ոչ իշխէին, կրեցեր անսերմնապէս զանապականումըն ի յարգանդի քում որպէս աղախին ըզՏէր, եւ ծընար որպէս ըզմարդ զԱստուածըն բոլորից, ըզմարմնացեալն առ ի քէն զանճառ ըզԲանն՝ ի փրկութիւն աշխարհի եւ կեանք անձանց մերոց:

Զատկի

Քրիստոս յարեալ ի մեռելոց, մահուամբ ըզմահ կոխեաց, եւ յարու- թեամբըն իւրով մեզ ըզկեանըս պարգե- ւեաց. նրմա փառք յաւիտեանս: Ամէն:

Խաչի

Առաջի պատուական ամենայաղթ խաչի քո՝ անկանիմք երկրրպագելով եւ խընդրեմք ըզթողութիւն յանցանաց մերոց. քանզի սովաւ բարձեր ըզդատապարտութիւն ազգի մարդկան: Եւ այժըմ, վասըն սրբբոյ աստուածային քո նըչանի՝ շնորհեա զերկնային ըզխաղաղութիւնդ ամենայն աշխարհի:

Եկեղեցւոյ

Ըզխաղաղութիւն շնորհեա եկե- դեցւոյ քում սրբբոյ, ըզխաղաղութիւն եւ զանչարժութիւն ի թըշնամեաց պատերազմէ, եւ հաստատեա ի մի հաւատ ըզկաթողիկէ եկեղեցի. ըզքեզ խոստովանիմք Տէր եւ Աստուած, կեցո ըզմեզ:

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆՔ

Ծննդեան ԱԶ.

**Սուրբ զԱստուածածինըն օրհնութեամբ մեծացուցանեմք:
Աւետաւոր հրեշտակն աւետարանէր ըզծընեալ փրկիչն ի սրբբոյ Կուսէն:
Ասէ՝ ուրախ լեր բերկրեալդ, քանզի Տէր տէրանց է ընդ քեզ:**

Յարութեան ԱԶ.

Զթագաւորըն փառաց Քրիստոս որ վասըն մեր մարմնացաւ ի սրբբոյ Կուսէն եւ խաչի համբերելով. միաբանութեամբ երգով բարբանեսցուք:

*Որ ըզլթաղումն երեքօրեայ յանձն հառ յարուցեալ ի մեռելոց իշխանութեամբ.
միաբանութեամբ երգով բարեբանեսցուք:
Կարողապէս ըզղրունըս դրժոխոց խորտակեաց, եկեղեցոյ իւրում զգեցոյց զմեծ
վայելչութիւն. միաբանութեամբ երգով բարեբանեսցուք:*

Յարութեան ԱԿ.

*Թագաւորեաց Աստուած ի վերայ հեթանոսաց, եւ լուսազարդեալ պայծառացոյց սուրբ
զեկեղեցի. ժողովուրդք ըզՔրիստոս բարեբանեցէք:
Զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր հած, քանզի շիջոյց զխայթոց մահու խաչին իւրով
սրբբով. ժողովուրդք ըզՔրիստոս բարեբանեցէք:
Յարեաւ Աստուած եւ տիեզերք ամենայն նորափետուր զարդարեցան, եւ մանկունըք
հաղորդեցան մարմնոյ եւ արեան կենարարին. ժողովուրդք ըզՔրիստոս բարեբա- նեցէք:*

Յարութեան ԲԶ.

*Թագաւորին յաւիտենից մատուցուք զօրհներգութիւն որ ի Կոստէն մարմնացաւ,
հաստատեաց զաշխարհս ի հաւատս անասանելի. փառք նրմա այժմ եւ յաւիտեան:
Որ կամաւ համբեր մահու խաչի Աստուած Բանն եւ եհեղ զարիւն իւր սուրբ ի փրկուցութիւն
տիեզերաց. փառք նրմա այժմ եւ յաւի- տեան:
Աստուածապէս յարուցեալ ի նորափոր ի վիմէն լուսազարդեաց զեկեղեցի իւր սուրբ, ի փառս
եւ ի գովեստ անուան իւրոյ. փառք նրմա այժմ եւ յաւիտեան:*

Յարութեան ԲԿ.

*Օրհնութիւն ի բարձունս, տնօրինեցելոյն ի Կոստէն Թագաւորին մերոյ. ալէլուիա, ալէլուիա:
Օրհնութիւն ի բարձունս, անասանելի եւ հաստատուն յուսոյն մերոյ. ալէլուիա, ալէլուիա:
Օրհնութիւն ի բարձունս, անբաժանելի եւ միասնական Սուրբ Երրորդութեանն. ալէլուիա,
ալէ- լուիա:*

Յարութեան ԳԶ.

*ԶԹագաւորն Քրիստոս օրհնութեամբ երգով բարեբանեցէք ամենայն երկիր:
Արարողին երկնի եւ երկրի մատուցուք երգով գոհաբանութիւն ամենայն երկիր:
Երրորդութեանն եւ մի աստուածութեանն մատուցուք պատիւ երկրրպագութիւն
յաւիտեանս: Ամէն:*

Յարութեան ԳԿ.

*Լուսով աստուածութեան քո Քրիս- տոս լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի. պահեա ըզսա
անշարժ յաւիտեան:*

Տօնէ այսօր Երոստադէմ հաւատացելոց բազմութեամբ գնաւակատիս սուրբ եկեղեցւոյ. պահեա ըզսա անշարժ յաւիտեան:

Բացան դրոսնրք հաւատոյ նոր Սիոնի ընդունել գանմահ փեսայդ յառագաստ, բաշխէ գմարմին քո եւ գարիւն. պահեա ըզսա անշարժ յաւիտեան:

Յարութեան ԴԶ.

Թագաւոր Քրիստոս էակից Հօր եւ Հոգւոյն, որ վասըն մեր մարմնացար ի սուրբ Կուսէն. Թագաւոր փառաց Քրիստոս քեզ փառք:

Որ կամաւոր մահուամբ ըզմահ մե- ուուցեր, եւ անապական յարութեամբըդ քո նորոգեցեր գաշխարհս. Թագաւոր փառաց Քրիստոս քեզ փառք:

Որ կենդանարար արեամբըդ քո լուսաւորեցեր սուրբ գեկեղեցի. երգեմք քեզ ընդ հրեշտակս ասելով. Թագաւոր փառաց Քրիստոս քեզ փառք:

Յարութեան ԴԿ.

Որ անբաւելի յաղթող գօրութեամբ Թագաւոր ես երկնի եւ երկրի Քրիստոս Աստըւած. օրհնաբանեմք ըզքեզ:

Որ փառակցութեամբ ընդ Հօր վերօրհնիս յանմահից, եւ խոնար- հեալ մարմին ըզգեցար փառաց Թագաւոր. օրհնաբանեմք ըզքեզ:

Որ կարողապէս ըզմահ կոխեցեր, եւ յարուցեալ լուսաւորեցեր սուրբ գեկեղեցի անմահ էութիւն. օրհնաբանեմք ըզքեզ:

Վերափոխման Աստուածածնի ԲԶ.

Անթառամ ծաղիկ անդատապարտ շառաւիղ վերաբուսեալ յարմատոյն Յեսսեայ, գքեզ Եսայիաս կանխաւ վերագոչեաց եօթնարփեան շնորհաց Հոգւոյն ընդունարան գոյ. Աստուածածին եւ կոյս գքեզ մեծացուցանեմք:

Համեղաճաշակ պըտղոյն բանաւոր բարունակ, յորմէ կլթեցաւ մեզ ողկոյզն անըսպառ յուրախութիւն տըրտմեցելոցն ի ճաշակմանէ ծառոյն գիտութեան. Սըրբուհի անարատ ամենեքեան գքեզ մեծացուցանեմք:

Քաղաքավարեալ ի մարմնի անա- րատ վարուք, այսօր յառաքելոցն ամփոփեալ վերին ակնարկու-թեամբըն վերափոխեցար յարքայութիւն որդւոյ քո եւ Աստուծոյ մերոյ. բարեխօս խոստովանողացս գքեզ մեծացուցանեմք:

Խաչի ԳԿ.

Յաղթող եւ գնոր օրհնութիւն միշտ ի բարձունս երգեսցուք Թագաւորին Քրիստոսի, հաւատացեալ ժողովուրդք:

Որ եկն ի լուսաւորել գընտրեալ սուրբ գեկեղեցի. եւ պըսակեաց սուրբ խաչիւն նըմա ըզփառս երգեսցուք:

Այսօր եւ մեք տօնեսցուք գնաւակատիս սուրբ խաչին. եւ փըրկողին մատուցուք փառք եւ պատիւ յաւիտեան:

ՃԱՇՈՒ ԱԼԷԼՈՒՔ

Ծննդեան

Այլելուհա, այլելուհա:

Այսօր ծընաւ որ ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս Որդին, որ է օծեալ Տէր ի քաղաքի Դաւթի:

Մեծ Պահոց - Սաղմոս ԴԹ. (Ճ.)

Այլելուհա, այլելուհա:

Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր, ծառայեցէք Տեառն ուրախութեամբ:

Մրտէք առաջի նորա ցրնծութեամբ, ծաներուք զի նա է Տէր Աստուած մեր:

Նա արար ըզմեզ եւ ոչ մեք էաք, մեք ժողովուրդք եւ խաչն արօտի նորա:

Մրտէք ընդ զրոննրս նորա խոստովանութեամբ եւ օրհնութեամբ ի յարկնս նորա:

Խոստովան եղերուք Տեառն եւ օրհնեցէք զանուն նորա:

Քաղցր է Տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա:

Ազգէ մինչեւ յազգ է ճրճարտութիւն նորա:

Ձատկի Յինանց (Սղ. ՃԽԷ)

Այլելուհա, այլելուհա:

Գովեա Երուսաղէմ ըզՏէր:

Եւ օրհնեա զԱստուած քո, Սիոն:

Զի զօրացոյց ըզնիզըս զրանց քոց, եւ օրհնեաց զորդիս քո ի քեզ:

Ո եղ ըզսահմանըս քո ի խաղաղութիւն, պարարտութեամբ ցորենոյ լըցոյց ըզքեզ:

Առաքէ ըզբան իւր յերկիր, վաղվաղ ընթանան պատգամք նորա:

Դրնէ ըզճիւն որպէս գասր, եւ ըզմէզ որպէս փոշի ցանեաց:

Արկանէ ըզսառն որպէս պատառս, առաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կալ:

Առաքէ ըզբան իւր եւ հալէ զնոսս, շընչեսցեն հողմք եւ գնասցեն ջուրք:

Պատմէ ըզբան իւր Յակոբայ, զարդարութիւն եւ զիրաւունս Իսրայէլի:

Ոչ այսպէս արար ամենայն ազգաց Տէր:

Եւ ըզղատաստանըս իւր ոչ յայտնեաց նոցա:

Վերափոխման Աստուածածնի

Այլելուհա, այլելուհա:

Հոգին Սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո:

Խաչի եւ Եկեղեցոյ

Այլընտրանք, այլընտրանք:

Նրա անհատական առ մեզ լույս երեսաց քոց, եւ ետուր ուրախութիւն սրբոց մերոց:

Կամ

Այլընտրանք, այլընտրանք:

Որպէս սիրելի եւ յարկըք քո, Տէր զօրութեանց: Յանկայ եւ փափաքէ անձն իմ ի գաւիթըս քո:

ՍՐԲԱՍԱՅՈՒԹԻՒՆՔ

Ծննդեան, Վարդավառի եւ Աստուածածնի

Բազմութիւնք հրեշտակաց եւ զօրաց երկնաւորաց, իջեալ ի յերկնից ընդ միածին թագաւորին,

Ճ Որք երգէին եւ ասէին՝ սա է Որդին Աստուծոյ. ամենեքեան ա- սասցուք, ուրախ լերուք երկինք եւ ցընծասցեն հիմունք աշխարհի, զի Աստուածն յաւիտենական ի յերկրի երեւեցաւ եւ ընդ մարդկան շրջեցաւ, զի կեցուցէ զանձինըս մեր:

Ձատկի, Յինանց,

Համբարձման եւ Խաչի

Ո՞վ է որպէս Տէր Աստուած մեր, խաչեցաւ վասըն մեր, թաղեցաւ,

Ճ Եւ յարեաւ, հաւատարիմ եղեւ յաշխարհի եւ համբարձաւ փառօք: Եկայք ժողովուրդք, զօրհնութիւն ընդ հրեշտակս երգեսցուք նրմա ասելով, սուրբ, սուրբ, սուրբ ես, Տէր Աստուած մեր:

ՇԱՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԶ.

*Ուրախ լեր սուրբ եկեղեցի, քանզի Քրիստոս արքայն երկնից այսօր պրսակեաց ըզքեզ խաչին իւրով. եւ զարդարեաց զամուրրս քո սքանչելի փառօքն իւրովք:
Խընդա յոյժ դուստրը Սիոնի, քանզի երկիրս երկինք եղեն այսօր վերըստին քո նորոգմամբ, եւ թագաւորն երկնաւոր հաճեցաւ բընակիլ ի քեզ:
Ընդ դասս երկնաւոր զօրացըն վեր առեալ տօնեմըք քեզ այսօր զանդադար փառատրութիւնս. ուրախ լեր հարսն անարատ անքընին քո խորհրդով:*

ՇԱՐԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ԱԿ.

*Որք զարդարեցին տընօրինաբար զիմաստս անեղին, հաստատելով յերկրի ըզգիր կենդանի հովուել ըզհօտ նոր Իսրայելի. երգով քաղցրութեան հընչմամբ զԱստուած օրհնեսցուք:
Որք զերկրաւոր մեծութիւն փառաց խաւար կոչեցին, ապաւինելով ի յոյս անմահ փեսային անճառ Բանին արժանի եղեն. երգով քաղցրութեան հընչմամբ զԱստուած օրհնեսցուք:*

Որք զօրութեամբ Հօր իմաստութեան էին անեղի հաստատեցին զաթոռ սրբոյն Գրիգորի թարգմանութեամբ նըշանագրութեան. երգով քաղցրութեան հընչմամբ զԱստուած օրհնեսցուք:

ՇԱՐԱԿԱՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԴԿ.

Նորահրաչ պրսակաւոր եւ զօրագլուխ առաքինեաց, վառեցար զինու Հոգւոյն արիաբար ընդդէմ մահու. Վարդան քաջ նահատակ որ վանեցեր ըզթըշնամին, վարդագոյն արեամբըզ քո պրսակեցեր զեկեղեցի:

*Երկնաւոր թագաւորին զինու յաղթեալ պատերազմին, խոհական իմաստութեամբ խոհեմացեալ անճառապէս. Խորէն խորհրդական եւ ծանուցեալ անուն բարի, խաչելոյն վրկայ եղեալ հեղմամբ արեան պրսակեցաւ:
Բենական լուսով լըցեալ արիա- ցեալըն քաջ Արտակ, թաթաւեալ ի կարմրութիւն բոսորային բըղխեալ աղբերն. զփրկականն ըմպեալ զբաժակ եւ մրկրտեալ արեամբն իւրով, դասակցեալ ընդ անմարմնոցն Երրորդութեանն երգել ըզփառս:*

ՇԱՐԱԿԱՆ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ԴԿ.

*Արեգակն արդարութեան ի Հայաստան ծագեալ պայծառացուցեր սուրբ զեկեղեցի հեղմամբ արեան սրբոցն. մաղթանօք սոցա խընայեա ի մեզ պարզեւատու բարեաց, եւ ողորմեա քո արարածոց:
Պանծայի սուրբ գաւակօք հովիւքըն զըւարթունք, հրով Հոգւոյն շիջուցին ըզբոցն ըզկրակապաշտ պարսիցն. մաղթանօք սոցա խընայեա ի մեզ պարզեւատու բարեաց, եւ ողորմեա քո արարածոց:*

Պարթեւական տեսանողին յառաջագոյն ազդեցութեամբ գհաւատոյ որդիս սըրբոյն Գրիգորի պըսակագարդ տեսեալ. մաղթանօք սոցա խընայեա ի մեզ պարգեւատու բարեաց, եւ ողորմեա քո արարածոց: